Ավետիք Իսահակյան

Հարևանիս որդին մեռավ

Հարևանիս որդին մեռավ,
Քսան տարու տղա.
Նոր էր ինձնից գիրք փոխ առավ,
Առո՛ւյգ, առո՛ղջ տղա:

Բիլ գիշեր է գարնանային՝
Լուսնով, բույրով օծուն.
Կոթնել եմ ես պատշգամբին՝
Միտքս ցավով խոցուն:

Աչքս եմ հառել պատուհանին
Մահով մթնած խուցի.
Մոմն է վառվում լուռ սնարին,
Դալուկ, առանց բոցի:

Եվ դիտում եմ, անհագ դիտում՝
Շուրջս լցված մահով.
Զարհուրանքն է հոգիս պատում
Անէության ահով:

Եվ աշխարհն է մեռել դառնում՝
Ընկած սրտիս վրրա.
Եվ լուսինը – դալուկ մի մոմ՝
Լուռ սնարին նրա …

1921

Վենետիկ